



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ**

N 102 - Ա

15 հունիսի 2017 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 4-Ի N 15-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով


որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի փետրվարի 4-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի երեխայի տարիքը որոշող հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» N 15-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի երեխայի տարիքը որոշող հանձնաժողովի կազմը՝

- | | |
|------------------|--|
| Բոթոյան Կարեն | - ՀՀ Գեղարքունիքի մարզպետ, հանձնաժողովի նախագահ |
| Նիկոյան Արտաշես | - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ |
| Պողոսյան Անուշ | - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ, քարտուղար |
| Բաղայան Գարիկ | - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ |
| Գալոյան Մամիկոն | - մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ |
| Խաչատրյան Սուրիկ | - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի վարիչ |
| Խաչատրյան Վիգեն | - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի վարիչ |
| Գնդոյան Արտուր | - ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության ոստիկանության Գավառի բաժնի անչափահասների խոցերով բաժանմունքի պետ /համաձայնությամբ/»: |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ՄԱՐԶՊԵՏ՝

ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ